ԱՎԴ4/0038/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 հուլիսի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2026 թվականի մարտի 5-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Գուրգեն Գագիկի Խուրշուդյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 37-0360-24 (ԱՎԴ4/0038/01/26) քրեական վարույթը:

1.1. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Պետրոսյան) 2026 թվականի մարտի 9-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունիսի 12-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Տ.Ոսկանյան) 2026 թվականի հունիսի 23-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 29-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Գուրգեն Գագիկի Խուրշուդյանի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) [նա] ուրիշի գույքը խաբեության եղանակով հափշտակելու դիտավորությամբ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի «վարձով տուն վարձով բնակարան List.am» էջում տեղադրել է ***** ****** ****

******** ****** ****** ******** *թաղամասում 160.000 ՀՀ դրամ ամսական գումարի դիմաց վարձակալությամբ բնակարան տրամադրելու մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որի կապակցությամբ 29.08.2024թ. իրեն զանգահարած Ռ.Ս.-ի հետ հեռախոսազրույցի ընթացքում դիտավորությամբ խեղաթյուրելով իրականությունը՝ վերջինիս հաղորդել է իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ՝ իբր հայտարարության մեջ նշված բնակարանն իրեն պատկանելու, այն իր կողմից վարձով տրամադրելու վերաբերյալ՝ հայտնելով նաև, որ նոր վարձակալը պետք է իրեն փոխանցի 100.000 ՀՀ դրամ գումար՝ իբր նախկին վարձակալների կողմից որպես դեպոզիտ վճարված գումարը նրանց հետ վերադարձնելու համար, որից հետո նույն օրը՝ ժամը 20.56-ին, ուսանող որդու համար Երևան քաղաքում շրջապ կարգով վարձակալությամբ բնակարան փնտրող և արդեն մոլորության մեջ ընկած Ռ.Ս.-ից իր տրամադրած քարտային հաշվին ստացել է 100.000 ՀՀ դրամ գումար՝ այդ կերպ ձեռք բերելով այն օգտագործելու ու տնօրինելու իրական հնարավորություն: (…)»[1]:

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունիսի 12-ի որոշման համաձայն՝ *«(…) Վերը շարադրված իրավադրույթների և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների լույսի ներքո վերլուծելով սույն քրեական գործի հանգամանքները, նախնական դատաքննությունների ընթացքում (հիմնական դատաքննությունները դեռևս չեն սկսվել) քննարկելով դատական նիստի ընթացքում դատավարության մասնակիցների դիրքորոշումները գործի ընդդատության հարցի վերաբերյալ՝ Դատարանը եզրահանգում է, որ սույն քրեական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի ընդդատությանը, քանի որ մեղադրյալին վերագրվող հանցանքի ենթադրյալ կատարումն, ըստ մեղադրյալի հայտարարության, ավարտվել է Երևան քաղաքի տարածքում:*

Հետևաբար Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը կարող է ավարտված համարվել Երևան քաղաքում, քանի որ մեղադրյալը տնօրինելու կամ օգտագործելու

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 1, թերթեր 107-108:

իրական հնարավորություն է ունեցել Երևան քաղաքում, իսկ գումարը հաշվեհամարին փոխանցելը դեռևս չի նշանակում, որ հանցանքն ավարտվել է, քանի որ դրա ավարտի պահը Օրենսդիրը պայմանավորում է հափշտակության առարկան ստանալու և տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալու պահով, ուստի սույն քրեական գործի քննությունն դուրս է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասության տարածքից, և ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: Նման եզրահանգման գալիս Դատարանը հաշվի է առնում գործի քննության ողջամիտ ժամկետները պահպանելու անհրաժեշտությունը: (…)»[2]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, վերոգրյալ իրավական և փաստական տվյալների վերլուծության հիման վրա իր անհամաձայնությունն է հայտնում Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հունիսի 12-ի որոշմամբ արտահայտված այն դիրքորոշման հետ, որ մեղադրյալը գումարը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել Երևան քաղաքում, ուստի քրեական գործի քննությունն դուրս է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասության տարածքից, և ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:*

Մասնավորապես Դատարանը արձանագրում է, որ Գուրգեն Գագիկի Խուրշուդյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը: Ավելին՝ մեղադրական եզրակացության մեջ թվարկված որևէ փաստական տվյալով հնարավոր չէ գալ եզրահանգման, որ Գուրգեն Գագիկի Խուրշուդյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայր է հանդիսանում Երևան քաղաքը:

Միաժամանակ Դատարանը արձանագրում է, որ առկա չեն այնպիսի քրեադատավարական ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 33-39:

դատարանին նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալի՝ ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու պահին իր գտնվելու վերաբերյալ դիրքորոշումը ճշտելու արդյունքում քրեական գործն ուղարկել ըստ ընդդատության: Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հունիսի 12-ի որոշումից ակնհայտ է դառնում, որ թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելիս դատարանը հիմք է ընդունել բացառապես մեղադրյալի հայտարարությունները: Դատարանի գնահատմամբ նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալի հայտարարությունները ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու պահին իր գտնվելու վայրի վերաբերյալ որևէ կերպ չեն կարող քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու հիմք հանդիսանալ: Հակառակ դեպքում կարող է ստացվել մի իրավիճակ, որ նախնական դատալսումների ընթացքում քրեական գործի ընդդատությունը կարող է փոխվել մեղադրյալի ցանկությամբ: Ընդ որում՝ նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալի կողմից կատարված հայտարարությունները որևէ կերպ չեն կարող բացասական ազդեցություն ունենալ վերջինիս վրա:

Դատարանի գնահատմամբ ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու պահին մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ կատարված հայտարարությունները կարող են հիմնական դատալսումների ժամանակ, մեղադրյալի հարցաքննության ընթացքում ստացված փվյալների համատեքստում հիմք հանդիսանալ քրեական գործն ընդդատությամբ փոխանցելու համար:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախնական դատալսումների փուլում մեղադրյալին մեղսագրված փաստական հանգամանքների շրջանակից դուրս որոշակի հանգամանք է հաստատված համարել և գործն ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, մինչդեռ դատարանը նախնական դատալսումների փուլում սահմանափակված է եղել մեղադրյալ Գուրգեն Գագիկի Խուրշուդյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ արտացոլված փաստական հանգամանքներով: Դատարանի գնահատմամբ քրեական գործն ըստ

ընդդատության ուղարկելու մասին իրավական կառուցակարգը կարող էր գործադրվել միայն Գուրգեն Գագիկի Խուրշուդյանի կողմից նրան մեղսագրված ենթադրյալ արարքի կատարման վայրը պարզելուց հետո, ինչը ենթադրաբար հնարավոր էր միայն հիմնական դատաքննությունների փուլում ապացույցների հետազոտումից հետո: Իսկ հիմնական դատաքննությունների փուլում, եթե ի հայտ կգային փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա կլիներ փոխանցման ըստ ընդդատության, այդ դեպքում Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը այդ հարցին պետք է լուծում տար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն:

Ամբողջացնելով վերոգրյալը Դատարանը փաստում է, որ Գուրգեն Գագիկի Խուրշուդյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից պարզ չէ ենթադրյալ հանցանքի կատարման վայրը: Ինչ վերաբերվում է նախնական դատաքննությունների ընթացքում մեղադրյալի կատարած հայտարարություններին առ այն, որ փուժողի փոխանցած գումարը կանխիկացրել և օգտագործել է Երևան քաղաքում, այդ ընթացքում Երևան քաղաքի տարածքը չի լքել, ապա Դատարանի գնահատմամբ վերոնշյալով նույնպես հաստատապես չի փաստվում ենթադրյալ հանցանքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված լինելու հանգամանքը:

Ավելին՝ մեղադրական եզրակացության մեջ ներառված վկաների ցուցմունքների բովանդակությունից (մասնավորապես վկաներ Ա.Մ և Վ.Ս.) ակնհայտ է դառնում, որ ենթադրյալ հանցանքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված լինելու հանգամանքը որևէ փաստական հիմք չունի:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[3]*:*

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 49-55:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նոտրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հաշվի առնելով նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալի հայտարարությունն այն մասին, որ վերջինս ենթադրյալ հափշտակված գումարը կանխիկացրել, և հետևաբար, այն տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավություն է ձեռք բերել Երևան քաղաքում, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ սույն վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, փաստելով, որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը, ինչպես նաև այն, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, վարույթի տվյալ փուլում սահմանափակված լինելով մեղադրյալ Գ.Խուրշուդյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշմամբ արտացոլված փաստական հանգամանքներով, վարույթն ըստ ընդդատության ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ հիմք ընդունելով բացառապես նախնական դատալսումների փուլում մեղադրյալ Գ.Խուրշուդյանի հայտարարությունը՝ ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու պահին իր գտնվելու վայրի վերաբերյալ, և հետևաբար, ենթադրյալ հանցանքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված լինելու հանգամանքը որևէ փաստական հիմք չունի[8]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում փաստել, որ մեղադրյալ Գ.Խուրշուդյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունից պարզ չէ, թե կոնկրետ որտեղ է վերջինս ենթադրյալ հափշտակության առարկա գումարը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ստացել: Նման պայմաններում, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս, պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում, որի նստավայրը գտնվում է Եղեգնաձոր քաղաքում:

14. Անդրադառնալով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչված՝ վարույթի ընդդատության հարցի քննության ընթացքում մեղադրյալ Գ.Խուրշուդյանի հայտարարությանը՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ այն ինքնին չէր կարող քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ՝ հատկապես հաշվի առնելով վարույթի նյութերում Գ.Խուրշուդյանի կողմից ենթադրյալ հափշտակության առարկա գումարը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ստանալու վայրի առնչությամբ վերջինիս հայտնած տեղեկություններից տարբերվող տվյալների առկայությունը[9]:

15. Վերոշարադրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

---

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 59, 93:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՎԴ4/0038/01/26 վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գուրգեն Գագիկի Խուրշուդյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԱՎԴ4/0038/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ